7483

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«30» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 139 - 24

Նախաձեռնող՝ *«Հայնախագիծ» ԲԲԸ*
ք.Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ «Կոտայք-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն
Կոտայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 139 - 24

«30» հոկտեմբեր 2024թ.

«ԿՈՏԱՅՔ-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Հայնախագիծ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Նախագծային ՄՄՀՏՊՓ նախագծեր, շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման /ՌԷԳ/ հաշվետվություն
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ

Ներածական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է միկրոռեգիոնի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիր իրականացմամբ:

Նախագծային փաստաթուղթը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է հիմնադրութային փաստաթուղթ:

Նկարագրական մաս. «ԿՈՏԱՅՔ-5» տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը ներառում է Ծաղկաձոր խոշորացված համայնքի՝ Ծաղկաձոր, Մեղրաձոր(Գոռգոչ), Աղավնաձոր, Արտավազ(Փյունիկ), Հանքավան, Մարմարիկ բնակավայրերը:

«Կոտայք-5» միկրոռեգիոնում սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը կազմում է 39 535.56 հա, հեռանկարում՝ 39 535.56 հա, որից բնակավայրի փաստացի սահմաններում 656.21հա, հեռանկարում 863.4822 հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 147.36հա, հեռանկարում 186,8572 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների 93.71 հա, հեռանկարում 117,248հա, հատուկ պահպանվող տարածքների 6672.69 հա, հեռանկարում 6832,7հա, հատուկ նշանակության հողերը բացակայում են, գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 23116.99 հա, հեռանկարում 22581.18 հա,

անտառային(ազգային պարկ) հողերը 8700 հա, հեռանկարում 8796,466 հա, ջրային հողերը 148,39հա, հեռանկարում 148,39 հա:

«Կոտայք-5» միկրոռեգիոնում ընդգրկված բնակչության թիվը կազմում է 6396 մարդ, հեռանկարում բնակչության թիվը կկազմի 7036 մարդ:

Կոտայքի մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, ալյումինի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, լիթոիդային պեմզայի, նեֆելենային սիենիտների, անդեզիտի, հրաբխային խարամների, բազալտի, քարաղի, զանազան շինարարական նյութերի և հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրերով (Հանքավան, Բջնի, Արզնի): Զգալի են ջրային ռեսուրսների պաշարները (Գառնիի, Կաթնաղբյուրի, Սոլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արզականի, Գյումուշի, Մաքրավանի քաղցրահամ ջրերի աղբյուրներ), որոնք խմելու ջրով ապահովում են ոչ միայն մարզի բնակավայրերը, այլ նաև Երևան քաղաքը:

Մարզում առկա են 33 բնության հուշարձաններ(ջրաբանական, երկրաբանական, կենսաբանական և այլն), 4 հատուկ պահպանվող տարածքներ՝ «Արզականի և Մեղրաձորի», «Բանքսի սոճու», «Հանքավանի ջրաբանական» արգելավայրերը, «Էրեբունի» պետական արգելոցը և մարզին սահմանակից «Խոսրովի անտառ» պետական արգելոցը:

Միկրոռեգիոնի տարածքում ոռոգումն իրականացվում է կոտայք ՋՕԸ-ի կողմից: Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջիններիս արդիականացում և վերակառուցում:

Բոլոր համայնքերի համար առաջարկված է հեղեղատար առուների նախագծում և կառուցում:

Միկրոռեգիոնում ներառված բոլոր բնակավայրերը գազաֆիկացված են: Կոտայք-5 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի գազի հեռանկարային տարեկան ընդհանուր պահանջարկը կկազմի մոտ 1.7մլն մ^3:

Դիտարկվող միկրոռեգիոնի բոլոր բնակավայրերում առկա են ինչպես գործող, այնպես էլ չգործող /փակ/ գերեզմանոցներ: «ԿՈՏԱՅՔ-5»-ի տարածաշրջանի համայնքներում տեղակայված է 10 գերեզմանոց ընդհանուր 7.5 հա տարածքում: Գերեզմանոցները գործող են:

Առկա են նաև պատմական գերեզմանոցներ, որոնց պահպանման նպատակով սույն նախագծով առաջարկվել է տարածքի պարսպապատում և ծառապատում: Գոյություն ունեցող գերեզմանոցները հիմնականում չունեն ռեզերվային տարածքներ ուստի կարիք ունեն հեռանկարում ընդլայնման :

Նախատեսվում է նաև մոտեցնող ճանապարհների խճապատում:

Գերեզմանատների մուտքային հատվածներում նախատեսվում է ավտոկայանատեղիներ: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու տարածման կանխարգելմանը:

Միկրոռեգիոնի բնակավայրերի աղբահանությունն իրականացվում է պայմանագրային հիմունքներով, մասնավոր ընկերության կողմից, շաբաթական երկու անգամ աղբը հեռացվելու է Հրազդան քաղաքի աղբավայր: Բոլոր բնակավայրերի տարածքներում առկա են աղբամաններ:

Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում գործելու է Կոտայքի և Գեղարքունիքի մարզերը սպասարկող տարածաշրջանային սանիտարական աղբավայր: Նախատեսվում է կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան սանիտարական աղբավայր և ներդնել աղբահանության ինտեգրված արդյունավետ համակարգ:

Ակունք համայնքում գործելու է փոխաբեռնման կայան, որտեղ նախատեսվում է Աբովյանի տարածաշրջանի բնակավայրերից հավաքված աղբը կուտակել, խտացնել, ապա մեծ կոնտեյներներով տեղափոխել նոր կառուցվող սանիտարական աղբավայր:

Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է 1599 տ/տարի: Քանի որ, համայնքները չունեն արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի նշված թափոնները թափվում են կենցաղային աղբավայր:

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին: Բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է բնակավայրերի տարածքում տեղակայված տրանսֆորմատորային ենթակայանների միջոցով:

«ԿՈՏԱՅՔ-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծի իրականացման շրջանակում իրականացվելու են շրջակա միջավայրի բարելավմանն ու պահպանմանն ուղղված միջոցառումներ՝

առաջնային ուղղություններ են հանդիսանում տարածքային զարգացման այն հիմնական ուղղությունները, որոնց մեջ ներդրումները նպաստավոր են այդ ոլորտների կայացման և զարգացման համար: Այդ ուղղությունների ընտրությունը կխթանեն.

-արտադրության գոյություն ունեցող հիմնական ճյուղերի զարգացումը,
-հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպումը,
-շրջակա միջավայրի բարելավումն և պահպանումը,
-ինժեներական ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի և սոցիալ-կենցաղային համակարգի զարգացումը,
-պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
-բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
-միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները կապող հատվածների վերանորոգում, միջհամայնքային ճանապարհների-կապերի վերանայում և կազմակերպում,
-բացառել գյուղատնտեսական բարձորակ և հատուկ պահպանվող տարածքների օտարումը, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձաններին վնաս պատճառումը,
-հիմնական գործառնական գոտիների վերանայում և հստակեցում,
-համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
-համայնքներում ոռոգման ջրի ցանցի արդիականացում և ընդլայնում,
-աղբավայրերի նախատեսում սանիտարական գոտիների պահպանմամբ,
-բոլոր գյուղական համայնքների կոյուղացում,
-գյուղական համայնքների կեղտաջրերի մաքրման կայանի նախագծում և գործարկում:
-նախատեսել նոր տեխնոլոգիաներ ջեռուցման ժամանակ՝ արևային էներգիա և բիոգազ,
-նախատեսել աղբի տեսակավորում:

«Կոտայք-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծի գործունեության ընթացքում իրականացվելու են ազդեցության մշտադիտարկումներ: Հողի, ջրի, օդի, անտառների, կանաչապատ տարածքների, կենսաբազմազանության մոնիթորինգ և տարեկան մեկ անգամ իրականացվելու է բնակչության աճի վիճակագրություն:

Պատճառաբանական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է միկրոռեգիոնի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման հիերարխիական կառուցվածքի (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) երեք մակարդակը միավորող տարածական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎՐԱՍԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
COMMISSION OF EXPERTS

այն դիտարկում է ինչպես միկրոռեգիոնային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը:

Փորձաքննության գործընթացում միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, կադաստրի կոմիտեի և Կոտայքի մարզպետարանի կողմից ներկայացված առաջարկությունները:

Փորձաքննության բոլոր փուլերում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում ազդակիր համայնքի ներկայացուցիչները դրական են արտահայտվել հիմնադրութային փաստաթղթի վերաբերյալ:

«Կոտայք 5» Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ընդգրկված համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրերի տարածքների կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները:

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

- Միկրոռեգիոնում քաղաքաշինական հեռանկարային լուծումներն իրականացնելիս՝ բացառել հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանական գոտիների և օգտագործման ռեժիմի խախտումը, անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները, պահպանել՝ սահմանված կարգով հաստատված, բնակավայրերի գլխավոր հատակագծերում ներառված կանաչապատ տարածքների, զբոսայգիների և այլ ընդհանուր օգտագործման տարածքների մակերեսները կամ դրանց փոփոխման դեպքում՝ բնակավայրերի այլ հատվածներում նախատեսել համարժեք տարածքներ:
- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված «ԿՈՏԱՅՔ-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան